

հայկական ուսումնասիրութիւններու շարք մը , որոնց իւրաքանչիւրը գիտութեան համար վճռական գիւտ մ'էր : Իր միակ փառքը՝ երկրին եւ երիտասարդութեան ծառայելու մէջ կը կայանար . ո՛չ դրամ կը սիրէր եւ ոչ նոյն իսկ գիտական պատիւներ : Շատ երջանիկ էր նա գրքերով , աշակերտներով , բարեկամներով ու պաշտօնակիցներով :

Մենք՝ որ այնքան տարիներ զուարթ ու մտերիմ ընտանութեամբ մը իրեն հետ անցուցինք , հիմա մտատանջ ու տխուր՝ կը հարցնենք իրարու , թէ ի՞նչպէս կարելի պիտի լինի առանց անոր ըլլալ եւ թէ ի՞նչպէս վարժարանը պիտի կրնայ առանց անոր ապրիլ : Միշտ մեծ պաւկաս մը կայ մեր մէջ , քանի որ այլ եւս ո՛չ իր իմաստուն խորհուրդներուն , ո՛չ բարեկամութեանը եւ ոչ ալ անձնուիրութեանը պիտի կրնանք ապաստանիլ :

Մեր սրտին խորէն վշտահար հրաժեշտը կուտանք անոր եւ կը պաւհենք իւր յիշատակն ու կսկիծը , որ չպիտի մոռցուին երբեք :

Երթաս բա՛րով , սիրելի՛ Կարիէր , երթաս բարով :

Գ . ՄՕՆՕ

ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆԸ

1) Ա. ՎՐՈՅՐ , Լոռի եւ շրջակայքը . ստէրէօսկոպիկ պատկերների ժողովածու : I եւ II մասեր :

Անի քաղքի եւ շրջակայ աւերակներու համբաւաւոր լուսանկարիչ Յովհաննէս Քիւրքճեանի աշխատութեան սպառումէն յետոյ , պէտք մը դարձած էր հանրամատչելի եւ աժանագին նկարներու հաւաքածու մը կազմելը : Այս պէտքը մասամբ լրացնել ուզեցին Մ. Փափագեան եւ Ա. Լալայեան , բայց գործը կաղ գնաց , անշուշտ նիւթական աջակցութեան պակասութեան պատճառով . իսկ այժմ՝ Ա. Վրոյր , ինչպէս կիւմանամ , նիւթականի պէտքը ոտքին տակ առած՝ ձեռնարկած է հանրամատչելի «ստէրէօսկոպիկ պատկերների ժողովածու» մը կազմելու : «Առ այժմ հրատարակւած է I եւ II մասերը , 24-ական պատկերներից բաղկացած , իւրաքանչիւր մասի գինը առանձին առանձին 6 ր. 50 կ. իսկ I եւ II մասերը միասին գնողները վճարում են 11 ր.» : Այս երկու մասերու մէջ նկարուած «տեղերի եւ պատմական անձինքների մասին մանրամասն եւ լիակատար տեղեկութիւններ շուտով լոյս կը տեսնեն «Գուլգարաց աշխարհ, անունով» հեղինակիս «հրատարակելի տեսութեան մէջ» : Առանց հաշուելու մի քանի անյաջող նկարները , ընդհանրապէս լաւ տպաւորութիւն կը գործէ Ա. Վրոյրի ժողովածուն . հիանալի են մանաւանդ Սանահին վանքի արեւելեան կողմի ընդհանուր տեսարանը , Գր. Տուտէորդու գերեզմանին վրայի խաչարձանը , Հաղբատի վանքի գաւթին գուռը , Դսեղի «սիրուն խաչ»ը եւ ուրիշներ : Պէտք է որ հասարակութիւնն օգտուի առթէն եւ քանի չէ սպառած՝ ձեռք բերէ այս ժողովածուէն : (Կը վաճառուի Թիֆլիս , «Գուտտէնբէրգ» գրաւաճառանոցում)

2) Տոքթ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ, Ընդարձակ Օրացոյց, 1902 : Տոմար, զանազան գիտելիքներ, վիճակագրական տեղեկութիւններ : ԿՊ. տպ. Մատթ. : 8⁰ էջք 560 : Գին 10 զրշ :

Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը երեք տարիէ ի վեր լաւ գործ մը կը կատարէ, ձեռնհաս անձերու յանձնելով բառիս բուն նշանակութեամբ Ընդարձակ Օրացոյցին պատրաստութիւնը : Ինչպէս կը տեսնուի, այս տարւանը քիչ մ'աւելի յառաջդիմութիւն ցոյց կուտայ նախորդ երկու տարիներուն վրայ. ուստի շնորհաւորութեան արժանի է գիտնական բժշկապետը : Երկու դիտողութիւն սակայն. ա) պէտք էր գէթ Հոկտ. եւ կամ Նոյ. ամիսներուն մէջ հրապարակ ելած լինէր Օրացոյցը. բ) շատ տեղ տալու չէր բանասէրի հովեր առնող համայնագէտ (!) Դաւիթ Խաչկոնցի ցնդաբանութիւններուն :

3) ԱՐԵՒԵԼՔ օրաթերթին մէջ Յուսակ (Մ. Նաթանեան), Ա. Անտոնեան եւ Գ. Շահինեան պէտք եղած խրատը տուին Դ. Խաչկոնցին, որ պատմական սխալներով ու գրական զոզութիւններով «ոզոզել» սկըսած էր մեր հրապարակը : Զարմանալին այն է որ Խաչկոնց յանգգնութիւնը կուեննայ խաբել փորձելու «Բանասէր»ի խմբագրութիւնն ալ, իր չգիտցած խնդիրներուն վրայ «ուսումնասիրութիւն» (!) մը զրկելով : Ի սէ'ր Աստծու, քիչ գրեցէք, բայց հասուն գրչով գրեցէք եւ միայն մէ'կ մասնագիտութիւն ընտրեցէք. «Qui trop embrasse mal étreint» :

4) ՄԽԻԹԱՐ ՊՈՆՏԱՅԻ, Ընթերցարան պատկերազարդ : Նախակրթարան, Բ տարի, կարդալ-խօսիլ-գրելու դրութեամբ : ԿՊ. տպ. Մատթ., 1901 : 8⁰ էջք 138 : Գին 5 զրշ :

Մասնագէտի վայել յառաջարան մը, — որ ուղեցոյց լինելու սահմանուած կերեւայ, — նո'յն դիւրութեամբ եղանակը, ոճի նո'յն միօրինակութիւնն ու մաքրութիւնը, ոտանաւորներու նո'յնքան գողտրիկ փունջ մը, նո'յնքան յաջողած պատկերներ, վերջապէս հրահանգիչ ամբողջութիւն մը կը կազմէ ներկայ հատորն ալ : Տարակոյս չկայ թէ այս տեսակ մասնագիտօրէն պատրաստուած դասագիրք մը ամէն տեղ ջերմ ընդունելութեան պիտի արժանանայ : Մ. Պոնտ. գրիչը բեղուն գործունէութեան մը սահմանուած կերեւայ : Ճանկալի էր որ ստէպ գրէր նա ոչ միայն մեր մանուկներուն այլ եւ դաստիարակներուն եւ ծնողքներուն համար եւս : Ո'րքան պէտք ունինք մանկավարժ գրիչներու :

5) Ա. ԴԱԽԹԵԱՆ, Նոր Դպրոց : Նախակրթութեան ամբողջ դասընթացք, համակերպող դրութեամբ : Տարրական Ընթացք, Ա. — Ը պլաններ, Գիրք աշակերտին : ԿՊ. 1901 : Տասը պրակներու գինն է 25 զրշ :

Տարրական, Միջին եւ Բարձր դասարաններու մէջ մի եւ նոյն ճիւղն աստիճանաբար ընդարձակելով աւանդելու դրութեան վրայ պատրաստուած է Նոր Դպրոցը, որ զարգարուած է նաեւ բազմաթիւ պատկերներով : Եթէ Նոր Դպրոցը պաշտօնապէս ընդունուի մեր մէջ, միօրինակութիւնը կը տիրէ ամէն տեղ եւ վերջ կը տրուի դասագրքերու կամ մայական ու շարունակական փոփոխութեանց, իւրաքանչիւր հոգաբարձուի եւ ուսուցչի քմահաճոյքին սահմ զնելով :

Բժ. Ա. ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ, Հայ դպրոցի դաւերից : I. Վարչականի շուրջը : Մոսկ., տպ. Բարխ., 1900 : 8⁰ էջք XIX + 43 : Գինն է 40 կոպ. :

II. քհ. ՄԵԼԵԱՆ, Ընթերցողների ուշադրութեանը : Բաթում, տպ. Գուրսկայեա, 1901 : 8⁰ էջք ԺԲ + 36 : Գին 10 կ. :

Հ. Յ. ԱՃԱՌԵԱՆ, Քննութիւն Ղարաբաղի բարբառին : Էջմ., 1901 : Փոքրիկ 8⁰ էջք Գ + 198 : Գին 3 ֆր. :